

Շահերի բախման ռիսկերի կառավարումը

1. Ներածություն. Էքուիթի Էյ Էմ ՓԲԸ-ն (EAM) պարտավոր է միջոցներ ձեռնարկել շահերի բախման այնպիսի իրավիճակները բացահայտելու և կանխարգելելու համար, որոնք կարող են ծագել իր և հաճախորդի, կամ երկու հաճախորդների միջև: Սույն փաստաթուղթը (Շահերի բախումների կանխարգելման քաղաքականություն) սահմանում է այն պոտենցիալ ռեպերը, որոնք կարող են հանդիսանալ շահերի բախումներ, և ամփոփ ներկայացնում է այն գործողությունները, որոնք մենք ձեռնարկելու ենք՝ այդպիսի շահերի բախումները կանխարգելելու համար:

2. Պոտենցիալ կամ իրական կոնֆլիկտ. Շահերի բախում կարող է առաջանալ այն ռեպերում, երբ EAM-ը, իր աշխատակիցներից մեկը կամ EAM փոխկապակցված անձանցից մեկը այնպիսի ֆինանսական ծառայություններ է մատուցում իր հաճախորդներին կամ ներգրավվում է նրա հաշվով այնպիսի գործողությունների կատարման մեջ, որոնք կարող են նյութական վնաս հասցնել հաճախորդին: Այդպիսի ռեպերից են, օրինակ, երբ EAM-ը կամ նրա աշխատակիցը.

- 2.1. Կարող է գումար վաստակել կամ խուսափել վնասից՝ ի հաշիվ հաճախորդի,
- 2.2. Հաճախորդի համար մատուցված ծառայության կամ հաճախորդի անունից իրականացված գործարքի ելքի մեջ ունի շահագրգռվածություն, որը հակասում է հաճախորդի շահին,
- 2.3. Հաճախորդի հաշվին ի օգուտ այլ հաճախորդների կամ հաճախորդների խմբի գորելու համար ունի նյութական կամ այլ շահագրգռվածություն:

EAM-ը և իր փոխկապակցված անձինք հաճախորդների համար մատուցում են մի շարք ծառայությունների, ներառյալ խորհրդատվական, վաճառքի և առևտրային գործունեության ծառայություններ: Որպես այդպիսին, EAM-ը սահմանել է հետևյալ ռեպերը, որոնք կարող են հանգեցնել շահերի բախման:

- 2.4. Երբ EAM-ը գործում է որպես իր սեփական հաշվի պրինցիպալ՝ ներդրումը հաճախորդին վաճառելու կամ այն հաճախորդից գնելու ժամանակ, կամ այլ կերպ այդպիսի ներդրման կամ դրան փոխկապակցված ներդրման հետ գործարք անելիս,
- 2.5. Հաճախորդի պատվերը փոխանցելու կամ կատարելու համար պատվերը այլ ընկերությանը փոխանցելիս վճար ստանալը,

2.6. Մի հաճախորդի գործարքը այլ հաճախորդին առաջարկելիս, երբ EAM-ը երկու հաճախորդների համար հանդես է գալիս որպես միջնորդ գործակալ՝ ստանալով համապատասխան միջնորդավճարներ:

3. Զաղաքականություններ և ընթացակարգեր. EAM հաստատել է ներքին ջաղաքականություններ և ընթացակարգեր, որոնք նպատակ ունեն կառավարել շահերի բախման հետ կապված ռիսկերը՝ անընդհատ դիտարկելով այդպիսի դեպքերը:

3.1. **Տեղեկատվական արգելքներ.** Տեղեկատվական արգելքները, որոնք հաճախ կոչվում են , Չինական Պատերե, կանոնների, ընթացակարգերի և կազմակերպական միջոցառումների ամբողջություն է, որը նպատակ է հետապնդում երաշխավորելու, որ EAM կողմից կազմակերպված գործընթացների մասնակիցների կողմից ձեռք բերված որոշակի տեղեկատվությունը չի փոխանցվում EAM այլ աշխատակիցներին կամ նրա փոխկապակցված անձանց: Տեղեկատվական արգելքները նպատակ են հետապնդում կառավարել շահերի բախման հետ կապված ռիսկերը՝ երաշխավորելով, որ հաճախորդի գաղտնի տեղեկատվությունը չի օգտագործվի ի շահ ուրիշների և որ հաճախորդին խորհուրդները և այլ ծառայությունները տրամադրվում են EAM շահերից անկախ:

3.2. **Արտաքին գործունեություն.** EAM աշխատողները պարտավոր են իրենց ողջ աշխատաժամանակը և եռանդը ներդնել ընկերությունում աշխատելու մեջ և խուսափել այնպիսի գործունեությունից, որը կարող է հակասել EAM կամ իր հաճախորդների շահերին: EAM աշխատողները չեն կարող ներգրավվել այլ գործունեության մեջ, ներառյալ գործարարական գործունեության մեջ՝ առանց EAM գրավոր համաձայնության:

3.3. **Նվերներ և ժամանց.** EAM ընդունել է , բիզնես նվերներից ջաղաքականությունը: EAM աշխատողները իրավունք չունեն ուղղակիորեն կամ անուղղակիորեն տալ կամ ցանկացած հաճախորդից ստանալ նվերներ, գույքի օգտագործման իրավունք կամ այլ ծառայություններ: Այս ջաղաքականությունը գործում է նաև այն դեպքում, երբ աշխատողը վճարում է նվերի համար և EAM-ից փոխհատուցում չի պահանջում: EAM աշխատողները և նրանց ընտանիքի անդամները իրավունք չունեն ընդունել ողջամիտ արժեքը գերազանցող ցանկացած նվեր, ներառյալ հյուրասիրություն ցանկացած անձից, ով EAM հետ գտնվում է գործարարական կապի մեջ:

3.4. **Անկախության ջաղաքականություն.** EAM կամ իր աշխատողները ներդրումային ծառայություններ մատուցելիս անտեսում է այն նյութական շահերը, որը նրանք կարող են ունենալ հաճախորդներին խորհրդատվություն տրամադրելիս կամ նրանց համար գործարքներ կնքելիս: Այդ ջաղաքականությունը երաշխավորում է, որ

հաճախորդներին ծառայություններ մատուցելիս EAM աշխատողները գործում են անկախ այլ հաճախորդների կամ EAM հանդեպ ստանձնած պարտավորություններից: Սա նշանակում է, որ բոլոր աշխատողները պետք է անտեսեն հետևյալ շահերը և չպետք է թույլ տան այնպիսի շահերի գոյություն, որը նրանց վրա կարող է ազդել հաճախորդների համար գործարքներ կատարելիս:

3.4.1. Ցանկացած անձնական շահագրգռվածություն, որը նրանք կամ նրանց ընտանիքի անդամները կարող են ունենալ: Անկախ սույն քաղաքականության դրույթներից, անհրաժեշտության դեպքում հաճախորդին անհրաժեշտ է տեղյակ պահել այդպիսի շահերի գոյության մասին,

3.4.2. Ցանկացած գոյություն ունեցող, առաջարկվող կամ հնարավոր գործարարական կապ

EAM-ի և ցանկացած երրորդ անձի միջև, և

3.4.3. Ցանկացած համաձայնություն կամ գործարք, որը կարող է կնքվել EAM հետ:

Վերը շարադրված օրինակները սպառնիչ չեն և EAM աշխատողները ամեն դեպքում պարտավոր են գերծ մնալ ցանկացած շահերի բախումից:

4. Բացահայտում. EAM կձեռնարկի բոլոր ողջամիտ քայլերը՝ շահերի բախումների հետ կապված ռիսկերը կառավարելու համար, սակայն եթե այդպիսի ջանքերը բավարար չլինեն երաշխավորելու, որ հաճախորդի շահերին սպառնացող վնասը հնարավոր է արդյունավետորեն կանխարգելել, EAM պետք է մինչև հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելը անհրաժեշտության դեպքում նրան գրավոր տեղյակ պահի այդպիսի վնասի բնույթի և աղբյուրի մասին:

Հաճախորդին շահերի բախման ռիսկի մասին տեղյակ պահելու հարցը քննարկելիս EAM հաշվի կառնի կոնկրետ հաճախորդի կարգավիճակը և այն, թե արդյոք EAM հետ գործարար հարաբերություն հաստատելու դեպքում նա ի վիճակի է հասկանալ ռիսկը: Ցանկացած ծանուցում կպարունակի բավարար տեղեկատվություն՝ գիտակցված որոշում կայացնելու համար:

EAM իր ստանդարտ համաձայնագրի միջոցով պարտավոր է մինչև հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելը ընդհանուր առմամբ կամ կոնկրետ գործարքի հետ կապված հաճախորդին տեղյակ պահել շահերի բախման բոլոր էական հանգամանքների մասին: Այդ ծանուցումն իրականացվում է նույնիսկ այն դեպքերում, երբ EAM աշխատակիցը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները՝ շահերի բախումների ռիսկը նվազեցնելու համար: Շահերի բախումների կանխարգելման քաղաքականությունը մեր համաձայնագրի մաս չի կազմում, պայմանագրային պարտադիր ուժ չունի և դրանով մենք չենք ստանձնում պարտավորություններ, որոնք այլ կերպ մեզ վրա դրված են ՀՀ օրենսդրությամբ կամ ՀՀ ԿԲ որոշումներով:

Մերժում. Այն դեպքում, երբ EAM բացահայտում է, որ ի վիճակի չէ սույն քաղաքականությամբ նկարագրված եղանակներով կառավարել շահերի բախումների հետ կապված ռիսկերը, EAM կարող է մերժել հաճախորդի համար ծառայությունների մատուցումը: